ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«14» 03 2013 թ.

< 4-350

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
պրն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2013թ. փետրվարի 20-ի թիվ 02/12.3/2214-13 գրության՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև համատեղ կինոարտադրության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ, Ձեզ եմ ուղարկում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև համատեղ կինոարտադրության մասին» համաձայնագրի նախագծի վերաբերալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽ. ԱՐՁԱՆ ԸՆԴ. 010-6410 14 03 2013

Կատ.՝ Ն.Ափուջանյան, Ա.Կարճիկյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև համատեղ կինոարտադրության մասին» համաձայնագրի նախագծի վերաբերալ

Համաձայնագրի նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումները.

1. Համաձայնագրի նախագծի 3-րդ հոդվածի երրորդ և չորրորդ պարբերությունների համաձայն՝ համատեղ արտադրության ֆիլմում ընդգրկված գեղարվեստական և տեխնիկական անձնակազմի անդամները պետք է լինեն ազգությամբ հայ, ֆրանսիացի կամ ունենան Եվրոպական Միության կամ Եվրոպական տնտեսական գոտու երկրներից որևէ մեկի ազգային պատկանելություն: Օտարերկրացիները, որոնք ազգությամբ նշված երկրներից չեն, սակայն կարող են հաստատել, որ հինգ տարուց ավելի հանդիսանում են Հայաստանի կամ Ֆրանսիայի ռեզիդենտ, Համաձայնագրի իմաստով կարող են դիտարկվել որպես ազգությամբ հայ կամ ֆրանսիացի: Կողմերի իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են թույլ տալ գեղարվեստական կամ տեխնիկական անձնակազմի ներգրավում, որը չի համապատասխանում ազգային պատկանելության կամ ռեզիդենտության սահմանված պահանջներին:

Առաջարկում ենք քննարկել վերոհիշյալ սահմանափակումները նախատեսելու նպատակահարմարությունը՝ ի նկատի ունենալով ազգային խտրականության հետ կապված հնարավոր մեկնաբանությունները:

2. Առաջարկում ենք նաև քննարկել համաձայնագրի նախագծի 6-րդ հոդվածի նպատակահարմարությունը: Համաձայն նշված հոդվածի՝ անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկվեն ֆիլմի աշխատանքների հետ կապված գեղարվեստական և տեխնիկական անձնակազմի տեղափոխման և կացության, ինչպես նաև համատեղ արտադրության ֆիլմի արտադրության կամ շահագործման համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների (ֆիլմ, տեխնիկական սարքավորումներ, հագուստներ, դեկորներ, աքսեսուարներ, գովազդային նյութեր)՝ Կողմերի պետական տարածքներ ներմուծման և Կողմերի պետական տարածքներից արտահանման համար՝ Կողմերի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. Խաչատրյան**

01.03.13թ.